

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿՆՈՋ ՈՒՂԻՆ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա) առաջին միջազգային փաստաթուղթն է, որի դրույթները վերաբերում են կոնկրետ կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը: Ստամբուլի կոնվենցիան երաշխավորում է, որ տուժողներն ու նրանց երեխաները ստանան համապատասխան աջակցություն պետական կառույցներից և հասարակական կազմակերպություններից՝ բռնությունից ազատվելու համար: Այստեղ ներկայացված երկու պատմությունները պատկերում են բռնության ենթարկված կնոջ ուղին՝ մի դեպքում այնպիսի երկրում, որտեղ կիրառվում է Ստամբուլի կոնվենցիան, մյուս դեպքում այնպիսի երկրում, որտեղ այն չի կիրառվում:



ԱՌԱՆՑ ՄՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՏՑԻԱՅԻ




Տիկին X-ի ամուսինը նրան տարիներ շարունակ հոգեբանորեն ճնշել է և վերջերս սկսել է հրել ու հարվածել նրան: Տիկին X-ը որոշում է, որ այլևս չի կարող տանել բռնությունը: Նա հույսը դնում է իր ընտանիքի վրա, բայց նրանք չեն հավատում նրան ու ասում են, որ նորմալ է, երբ ամուսինը երբեմն ծեծում է կնոջը:

Նա դիմում է ոստիկանություն, բայց նրանք ևս չեն հավատում, կնոջն են մեղադրում բռնության համար և ասում, որ դա ներքին ընտանեկան խնդիր է:



Նա դիմում է աջակցման կենտրոններին, բայց նրան հարցնում են, թե ինչու ավելի շուտ չի լքել ամուսնուն և ընդամենն ուղղորդում են զանգահարել 24/7 թեժ գիծ:

Տիկին X-ը զանգահարում է թեժ գիծ, որտեղից նրան ուղղորդում են կանանց ապաստարան, սակայն ասում, որ ապաստարանում անվճար մահճակալ չկա: Նա գնում է ընդհանուր ապաստարան, որտեղ սակայն ևս իրեն լավ չի գգում, քանի որ ստիպված է լինում կիսել խոհանոցն ու լոգարանը տղամարդկանց հետ:



Տիկին X-ը փաստաբան է գտնում իր գործը վարելու համար, որին հազիվ է կարողանում վճարել:



Ա) Ի վերջո, նա կամ փողոցներում է գիշերում,

Բ) կամ այլ ելք չունենալով, վերադառնում է տուն՝ իր դաժան ամուսնու մոտ:



Արդյունքում տիկին X-ը դառնում է ֆինանսապես անկայուն և չի կարողանում վճարել իր փաստաբանին՝ պաշտպանելու իրեն ամուսնուց:



Տիկին X-ը հուսահատ և ընկճված է զգում, քնի խանգարումներ ու նյարդային նոպաներ է ունենում, կորցնում ախորժակը: Առողջության վատթարացման պատճառով նա զրկվում է աշխատանքից, իսկ ընտանիքը հրաժարվում է օգնել նրան:

ԵՍ ԶԵՉ ԴՈՒՐՍ
ԿՎՈՆԴԵՍ

ՄԵՆՔ
ԿՎԵՐՑՆԵՆՔ
ՔՈ
ԵՐԵՒԱՆԵՐԻՆ

ԶԵՉ ՈՉ ՈՔ ԶԻ ԴԱԿԱՏԱ





Տիկին X-ը գնում է կանանց խորհրդատվական կենտրոն, որտեղ նրան ներկայացնում են իրավիճակից դուրս գալու տարբեր եղանակները: Տիկին X-ը զարմանում է, թե որքան հարգալից և սրտացավ է խորհրդատուն, քանի որ իր ամուսինը միշտ ասում էր, թե իրեն ոչ ոք չի հավատա:



Խորհրդատուն իրականացնում է ռիսկերի գնահատում և խորհուրդ է տալիս Տիկին X-ին տեղափոխվել ապաստարան, որտեղ նա կլինի ապահով և կստանա իրավական, հոգեբանական, ֆինանսական և բնակարանային աջակցություն (ինչպես նաև աջակցություն իր երեխաների համար, եթե այդպիսիք կան):



Տիկին X-ը տեղափոխվում է ապաստարան, որտեղ նա իրեն լավ է զգում և շրջապատված է լինում այնպիսի կանանցով, ովքեր նա անցել են նմանատիպ պատմությունների միջով:



Նրան տալիս են կանանց խորհրդատվական կենտրոնի կոնտակտային տվյալները, որտեղ կարող են աջակցել նրան՝ հեռանալու իր բռնարար ամուսնուց:



Նա հիվանդանոցի սպասարահում տեսնում է ընտանեկան բռնության ենթարկվածների համար 24/7 թեժ գծի հեռախոսահամարը և գանգահարում:

Տիկին X-ի ամուսինը նրան տարիներ շարունակ հոգեբանորեն ճնշել է և վերջերս սկսել է հրել ու հարվածել նրան: Տիկին X-ը որոշում է, որ այլևս չի կարող տանել բռնությունը:



Թեև տիկին X-ը շատ է տառապել և դրա պատճառով հաճախ անհանգստության զգացումներ է ունենում, ապաստարանում շարունակում են աջակցել նրան, և, ի վերջո, նրան հաջողվում է տուն գտնել և ֆինանսական օժանդակություն ստանալ: Տիկին X-ին նաև ուղղորդում են փաստաբանի մոտ, որն օգնում է նրան դատական գործ հարուցել ամուսնու դեմ: Տիկին X-ը շատ է վախենում դատարան դիմելուց, բայց զգում է, որ կարող է դա անել, քանի որ այժմ ստանում է աջակցություն:

Երբ տիկին X-ը դիմում է դատարան, նա նկատում է, որ դատավորն իր հետ շփվում է հարգալից և պրոֆեսիոնալ կերպով: Դատավորը վերապատրաստում է անցել այն առանձնահատուկ մարտահրավերների վերաբերյալ, որոնց բռնության ենթարկված կանայք բախվում են:



ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՑԻԱՅԻ ԴԵՊՔՈՒՄ

ՄԵՆԵ ԲՈ ԿՈՂԵՒՆ ԵՆԵ

ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՆՈՐ ԿՅԱՆԵ ՍԿՍԵԼ

